

թայ, ի խնդակցութիւն Տօլբիթայ»։ Իսկ հայկական թարգմանութեան մէջ անուանը ամենեւին չեն յիշուիր. « Էւ եղև ուրախութիւն ամենեցուն եղբարցն նորա, որը էին ի Նինուէի »։ Ըստ Վուկասայի, Աքիւրը և Նարաթ ուրախակցութեան կու գան Տօլբիթայ առողջութեան համար, իսկ ըստ յոյն թարգմանութեան, Աքիւրաբոս և իւր եղբորդիին Նարաս, Տօլբիթայ հարստանեաց համար կու գան։ Վուկասայի մէջ ընդհանուր և տարտամ նշանակութիւն ունի Consobrini բառն, ընդհակառակն յուսարէն ἐξόδεσθαι բառն որոշակի կը բացատրէ խնդիրը։

Արդ, Աքիւրաբոս պատմութիւնը կարելու ձեռնօթութիւններով պիտի ձեռնացնէ այսուհետեւ՝ Տօլբիթայ գրոց նոր հրատարակութիւնըրէ Դարձեալ, ինչպէս յայտնի է, իսկարու « իմաստութիւնը »։ Համաձայն է Սոլոմոնի Առակաց գրոց, կամ լաւ եւս, կ'օգտուի երբայական բարոյականէն, որ Առակաց և Ժողովողի մէջ կը գտնուի, և ընթերցողը արդէն նկատած պիտի ըլլան իսկարու և Հին կտակարանի առածից մէջ եղած նմանութիւնըրէ։

Բ. Ա.

## ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Ազգագրական Հանդէս, 1898. տպ. Թիֆլիս։ — Ազգային տոյն մեցամեայ Հանդէսն՝ որ կը հրատարակուի իմպագրութեամբ և խնամքով հմուտ բանասէր պր. Երուսաղ լալայեանցի, կրնամք ըսել թէ այն հրատարակութեանց մին է, որ հաւատարիմ իւր զրած

ծրագրին և խոստման, ըստ կարելոյն կը ջանայ մատակարարել իւր ընթերցողաց յոյժ շահեկան և հետաքրքրական ընտիր յօդուածներ, զիջաւորապէս ազգագրութեան վերաբերեալ, որ ինչպէս կը տեսնենք՝ Հանդիսին նշանաբանն և կամ թէ ըսեմ խորագրին է. Չեղբերին ունինք տարւոյս առաջին թիւը, այսինքն Գ տարի, զիրք Գ. տոյն հատորս 400 էջերէ կը բաղկանայ, որուն վրայ աւելցնելով նաեւ 80 երես եւս՝ — որ են « Մարգարանութեան վերաբերեալ նորագոյն տեսութիւններ » (գրուած Ա. Պոգոպայի և թարգմանուած ի խմբագրէն), նոյնպէս նաեւ « Օգիւտ Կոնստի կեանքի և նորա գրուածոց մասին մի քանի տեղեկութիւններ » (գրուած ի Ս. Թառայեանցի), և Գ. Ղարաշեանցի « Սոցիոգրիական միջազգային ինստիտուտ » վերաբերող յօդուածը, — որով ընդ ամենն 480 էջ պարունակութեամբ բաւական ստուար հատոր մը կը ձեւանայ, Համառօտ ակնարկ մի տանք Հանդիսիս զիջաւոր նիւթերուն։

1. Առաջին յօդուածը՝ որ ներկայանայ մեզ՝ է Հայ Եղեւթիւն աշխարհագրութիւնը, որուն հեղինակն է՝ Ս. Թառայեանց։ Յարգոյ յօդուածազրին նպատակն է՝ ցոյցընել թէ ներկայապէս հայ ազգը զիջաւորապէս ինչ արհեստներով կը պարսպի իւր բնավայրին մէջ, ուստի չի հետազօտեր թէ նախկին դարերէն սկսեալ ինչ կերպով և ուստի ճանով զարգացած է հայ արհեստագործութիւնը, և թէ ինչ հետքեր թողած են՝ այն Հին և դրացի ազգերը՝ որոնց հետ սերտ և անընդհատ յարաբերութիւն սունեցած է մեր ազգը. որովհետեւ « Այլպիսի մի հետազօտութիւն պահանջում է աւելի հմտութիւն և

1. Պէտք է զարմանալ թէ Նոր կտակարանի մէջ իսկ կան այնպիսի անցքեր, որոնց նմանները կը գտնուին ներկայ միայն մէջ։ Անպտուղ ծառայն առակը՝ մի է այնպիսիներէն որ ստեպ կը զործածուին, զոր Աւետարանիցք եթէ Յովհաննու Մկրտչին (Մտթ. Գ. 10) և եթէ Յիսուսի (Մտթ. Ի. 15. ԺԲ. 32-ԻԱ. 19) բերանը կը զննի, և զիջաւորապէս անպտուղ թփենայն առակը (Ղուկ. ԺԳ. 6)։ Երբ Փարիսեցին Սիմոն տեսաւ՝ Մարգարենացոյն զՅիսուս օծելը

ծանրագնի իւղով, գայթակղեցաւ անշուշտ իւր հիւրին վրայ, Սուրբ Գրոց, ինչպէս նաև իսկարու, առածը չպահելուն համար. « Իւղ մեղաւորի մի օծել զզուլիս իմ, կամ ըստ իրկարու. « Ի թողուցուս մեղաւորին օծանել զզուլիս քո իւղով անուխ »։ Առածը՝ ամէն ազգաց մէջ միշտ խօսակցութեանց համեմունք եղած են։ Կրնանք յիշել եւս Առաքելապետին Վաթուղ. Բ թղթոյն խոզ « Ընդ տիգմէ թաւալեալ » իմաստը՝ համաձայն իրկարու։

աւելի յարմար ժամանակ . . . ուստի և ես պապագային եմ թողնում նրան», և միայն՝ «նպատակ ունիմ՝ ձեռքի տակ եղած նիւթե, րից օգտուելով, կարճ, բայց սխտեմատիկա-կան կերպով նկարագրել, թէ ի՞նչ եղանակ-ներով են պատրաստում հայերը՝ հում նիւթից՝ իրանց հարկաւոր առարկաները, ըստ որում ի հարկէ իմ խօսքը վերաբերում է աւելի հին ձեւերին» + Ահա աղբիւրներն՝ ուստի օգտուած կը գրէ իւր այս երկը .

ա. Այն գիտողութիւնները, որ ես արել եմ իմ կեանքում ընդհանրապէս և վերջին տարիներս առանձնապէս :

բ. Մի շարք նամակներ, որոնցով իմ ծանօթները, համեմատ իմ պահանջներին, տեղեկութիւններ են հաղորդել զանազան տեղերի հայերի տնտեսութեան, և մանաւանդ արդիւնազորութեան մասին :

գ. իմ անձնական հարցուփորձը զանազան տեղերի հայերից :

դ. Գոյումթիւն ունեցող զրականութիւնը նոյն առարկայի, կամ՝ նրա հետ կապ ունեցող խնդիրների վերաբերեալ :

Եւս համառօտ Նախարանին՝ կը յաջորդէ Ներածութիւնն, ուր կը գտնէ այն սահմանները՝ յորս գլխաւորապէս Հայք տարածուած են, և ըստ իւր տեսլոյն՝ «Հայերի մեծագոյն մասը, որի հետ մենք իսկապէս գործ ունինք մեր աշխատութեան մէջ, թուով մօտ երեք միլիոն է հաշուում» . ահա այդ սահմանները. «Կովկասեան լեռնաշղթայն, Կասպից ծովը, իրանաբլդղական բարձրութիւնները, Եփրատ գետը, Սիւս ծովը և Վրաստան», և այլն :

Առաջին գլխուն մէջ կը խօսի գիւղական ընտանիքի արհեստագործութեան վրայ, բայց յառաջ քան բուն նիւթին անցնելու, ընդհանուր նկարագիր մը կու տայ գիւղական ընտանիքի կենաց, «որոնք գտնուում են քաղաքի ազգեցութիւնից տակաւին ազատ մնացած գիւղերում» + Սոյն նկարագրին մէջ, ի միջի այլոց՝ գեղեցիկ կերպով կը պատկերացնէ գիւղական կեանքն իւր նախնական պարզ և նահապետական նախնածիլի վրեժա-կին մէջ, ի բաց առեալ քանի մը եկամուտ և աւանդական անպէտ սովորութիւններ, զորս ուրիշ ո՛ր է և օտարազգի գիւղականաց քով

եւս կարելի է նշմարել։ Անցնելով բուն գիւղացւոց արհեստներուն, ըստ առարկային արհեստաւորն եւս կը զանազանէ, այսինքն՝ այր և կիւն. վերջնոյս պարագմունքն՝ աւելի թեւ թեւ «տնային հիմնական առարկաների և աւորեայ պիտոյքների պատրաստութիւնը», իսկ մարդունը՝ աւելի կարծր առարկաներ են՝ ինչպէս օր. փայտեղէն, կաշեղէն, երկրագործական և դիւղատնտեսական գործիքներ : Գրութեանս մէջ ի կարգին մանրամասնօրէն կը նկարագրէ այն ամենայն առարկաները, որոնցմով կը զբաղի հայ արհեստաւորը . յոյժ հետաքրքրական է նոցա գործելու եղանակը, սակայն ավստի որ տեղույ անձկութեան պատճառաւ կարող չենք գտնէ մի քանին յիշատակելու. բայց սակայն կը յորդորենք մեր ընթերցողները որ կարգան այդ աշխատութիւնը, զի հեղինակն ըստ կարի իւր ուժը և ջանքն չէ խնայած գրութեան նիւթոյն տէր լինելու և այնպէս ընթերցողաց ներկայացնելու :

2. Անցնինք երկրորդ յօդուածին (Հեղինակ Վ. Փափագեան) որ թէ և Հոյ-Բոհեմ վերնագրով կը ներկայանայ մեզ, սակայն, առ հասարակ այլ և այլ ազգաց Բոհեմերու-գնչուներու սկզբնական ծագումն կը հետազօտէ : Գնչուները, որք գրեթէ աշխարհիս չորս կողմը տարածուած են, այլ և այլ անուամբ կը կոչուին, բայց մի է նոյն յատկութիւնն սնին : Իրենց ծագումն մինչև վերջերս սեւ քողի տակ ծածկուած անծանօթ էր, սակայն հոսկ յետոյ լեզուաբանական տեսակէտով հետազօտելով և քննելով հաստատուեցաւ՝ որ խանձարուրքին եղած է Հնդկաստան. աւելորդ չեմ համարի հետաքրքրութեան համար հոս մէջ բերել յարգոյ յօդուածագրի կազմած վիճակագրական ցուցակը, գաղափար մը տալու համար մեր ընթերցողաց .

|          |         |
|----------|---------|
| Հոնգարիա | 150,000 |
| Թուրքիա  | 67,000  |
| Ռումինիա | 250,000 |

1. Պատգամի տակով Թուրքիայում հաշուած են 107,000 անձ և Բուլղարիայում 300,000 . իսկ Միկլօշիէ տակով Ռումաստանում ապրում են 1,500,000 չափ գնչուներ, որ անհաշուական է :

|                            |          |
|----------------------------|----------|
| Փոխադրեալ գումար           | 467, 000 |
| Իւսաստան                   | 63, 000  |
| Բաւարիա եւ Արեւել. Բաւարիա | 80, 000  |
| Սերբիա                     | 34, 000  |
| Սլաւիա                     | 40, 000  |
| Իտալիա                     | 32, 000  |
| Բոսնիա Հերցեգովինիա        | 48, 000  |
| Յունաստան                  | 40, 000  |
| Աւստրիա                    | 46, 000  |
| Շուէտ եւ Նորվեգիա          | 4, 500   |
| Գերմանիա                   | 2, 000   |
| Դանիա եւ Նիդերլանդիս       | 6, 000   |
| Ֆրանսիա                    | 2, 000   |
| Անգլիա                     | 42, 000  |
| Չեքոսլովակիա               | 300      |
| Եւրոպայի միւս երկիրներ     | 15, 000  |
| Ընդհ. գում. 769, 000       |          |

Գնչուները, որոնք ապրում են աշխարհի միւս մասերում, չեն որոշում քանակութեամբ, որովհետեւ միշտ երբուեւ են: Մասաչուսեթս կարելի է այսպիսի թուել տալ. Արկանզաս 3, 000, Փոքր Արկանզաս 67, 000 (50, 000 հայ բռնաներ), Պարսկաստան մինչեւ 1856 թիւը հաշուում էր՝ 15, 000, իսկ Անգլ. Կոլոնիան աւսում է: որ Սերբիում եւ Արեւմ. Հնդկաստանում կան 20, 000 գնչուներ, իսկ Աֆրիկայում, Ամերիկայում եւ Աւստրալիայում 166, 000:

Ըստ զանազան հեղինակների, գնչուների ընդհանուր թիւը տարուբերում է 1-5 միլիոնի, բայց միշտ թիւը վերցնելով կարելի է համարել ոչ աւելի քան 3 միլիոն:

Յօդուածին շարունակութիւնն շատ աւելի հետաքրքրական պիտի լինի մեզ համար քան ներկայս, որովհետեւ պիտի խօսի Հայ-բոշաներու վրայ, ինչպէս որ կը պահանջէ վերնագրերը, ուստի եւ յայտ ունիմք որ՝ ինչպէս այս առաջին մասն, նոյնպէս եւս յաջորդին մոտ տեղեկութեամբ կը լուսարարէ Հայ-բոշաներու գաղտնիքը: Թարգոյ Հեղինակն կազմած է այս գրութիւնը այլիք առաջ ունեւնալով բոլոր եւրոպացի գիտնականաց ուսումնասիրութիւնները, որք մասնաւորապէս նպատակ ունեցեր են հետազօտել բոշաներու գնչուներու ծագումն:

Յ. Երրորդ յօդուածն է՝ Բանաւոր իշխանութիւն, ինչպէս երբեք, որ վաղ երեւակայութեամբ եւ գիտաւոր գաղափարով յօրինուած ընտիր ժողովրդական երգ մ'է: Ար-

դեօք քանի քանի այսպիսի բանաստեղծութեանց փշուրներ կան մեր գաւառացի ժողովրդեան բերանը. եւ սակայն քիչեր կան՝ որ փոյթ ունենան գրի առնուլ գանոնք կորստնէլ զերծ պահելու համար. ուրախ ենք եւ միանգամայն փափաքող որ Յ. Ազնաուրեան եւ նմանակիցը՝ ոչ միայն սոսկ Զաւաղքի՝ այլ եւ ուրիշ գաւառաց մէջ դեռ եւս անկորուստ մնացած բոլոր ժողովրդական բանաստեղծութեան փշուրները գրի առնուն, որով միայն կարելի է ընտիր եւ կատարեալ հաւաքածոյ մ'ունենալ ժողովրդական բանաստեղծական նութեան:

4. Չորրորդ յօդուածն է Սեփան Եփեսոսի ապագայ, ռասանախոսութեան հոմար, Խոմար, գիր Հեղինակի սոյն ուսումնասիրութիւնն, որ գրելով Սինեան աշխարհի ժողովրդական տեղագրական եւ ազգագրական նկարագրին է, հետաքրքիր ընթերցողի ուշադրութիւնը կը դարձունէ այնու մանաւանդ՝ որ բաց ի գրաւոր աղբիւրներէ, նաեւ անձամբ ճանապարհորդած է, եւ այլիք առջեւ ունեւնալով իւր գրութեան նիւթը՝ ծրարած եւ կարգաւոր ոտով ի լոյս ընծայած է բոլոր կարի կատարեալ հրատարակութիւն մը, Հոս մեր սովորութեան համեմատ յիշենք միայն նիւթը գլխակարգութիւնը, որով կարծենք գաղափար մը տալ սոյն շահեկան գրութեան վրայ:

Ա. Պատմական տեսութիւն. — Այս մասում մենք շատ համոզուած կերպով յիշելու ենք մեր Հին մատենագիրների աւանդածները մեր ուսումնասիրելիք գաւառի մասին, եւ աւելի մանրամասն պիտի կանգ առնենք մէկնքների պատմութեան վրայ:

Բ. Տեղագրութիւն. — Այս մասում աւելի ուշագրութիւն դարձնելով բնական մասի վրայ՝ պիտի նկարագրենք առաւելապէս այժմեան տեղագրական վիճակը, միանգամայն յիշելով եւ հիշելով. (նշանաւոր տեղեր, գիւղեր եւ վանքեր):

Գ. Բնակիչների մասին կարելոյն չափ մարդաբանական տեղեկութիւններ:

Դ. Բնակարանը եւ իւր պարագաները: Ե. Ձգնտը եւ զարդը:

Վ. Լնտանեկան բարք. — Որոշելով իւրաքանչիւր շրջանի բնիկ ժողովուրդը՝ հաւաքելու ենք ազգաբնակչան տեղեկութիւններ նրանց ընտանեկան բարքի մասին (ամուսնութիւն և հարսանեաց սովորութիւններ, տղարեքը և կնո՜ւնք, ընտանեկան կեանք, հիւանդութիւն և բժշկութիւն, մահ, թաղում, մեռելոց յիշատակ, հոգւոյ և հանդերձեալ կեանքի մասին):

Ե. Տարւոյն կարեւորագոյն տօները և նրանց առթիւ կատարուող ծէսերն ու ժողովրդական սովորութիւնները:

Ը. Ժողովրդական բանաւոր գրականութիւն, աւանդութիւններ:

Ահաւասիկ իւր ծրագիրն զոր մանրամասն կը տեղեկագրէ Հեղինակն:

Շարայարեղի

Տ Ա Յ Ն Յ Ի



## ՍՈՒՐՀԱՆԴԱՆԻ ԲԱԶՄԱՎԻՊԻ

### ՆՈՐ ՀԱՐՑՄՈՒՆՔ



#### 1. ԳՐԱՀԱՇՈՒԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿ ՄԷ

Ուսումնասէր պարոմիկ Ե. Վ. — Յուլիս 6 թուով մասնակիդ առաջարկիմ համածայմ յամօ մեցի Բազմավիպի Ազոտտոս ամսեամ Սոքահան, դակիմ, Թոռոց գաղտնիք մը վերմագրի մերքեւ՝ քեզի հասցըմելու առաջարկ մը և Ոորա լուծումմ պտամալու. դեռ միմէւ օրս քեզմէմ պատասխամ մը չըմղումեցայ, Սեպտեմբերի Սոքահան, դակէմ վերջը կը սպասեմ հոկտեմբերիմ, և այժմէմ կ'իմացըմեմ որ եթէ քաջամաս լուծեւիլ՝ առնելիք միցամակդ պիտի լիմի Հաշտի աշահանաք մը մերկայ տարւոյս. բաց ամտի՝ Սոքահանդակի միցամակմերէմ փափաքածդ և ըմտրածդ պիտի ուղարկուի քեզ, եթէ յաջողիս լուծել Մասն հետեւեալ հարցս: — Չմոռեմ ըսելու որ առ քեզ գրածս կը զօրէ Ոյումպէս Մասն քու համատիղոց համար՝ որ և իցէ ազգայիմ վարժարանի ալ աշակերտ լիմիմ: — Ահաւասիկ.

Գրահարցի մէջ ծամօթ պէտք է լիմի քեզի՝ որ երկրորդ աստիճանի հաւասարութեանց մէջ՝

ամծամօթից թուական զօրութիւնը (բազմամծամօթ հաւասարութեանց մէջ) կը գտնուի՝ ածամօթից զուգարիւ հաւասարութեանց ձեռքով. զոր օրինակ հետեւեալ  $2 \text{ ա} + \text{բ} - 5 \text{ գ} = 12$  հաւասարութեամ մէջ ա, բ, գ ամծամօթից թուական զօրութիւնները գտնելու համար՝ կարելոք եմ գէշ ուրիշ երկու հաւասարութիւնք ալ, որով կարելի լիմի գործողութիւնը կատարել. — բայց ես առւումք ուրիշ հաւասարութեանց դիմելու և միայն քու սովորածդ տարրական գրահարցի շրջանակիմ մէջ գործելով՝ վերոյիշեալ մի միակ հաւասարութեամ ձեռքով կը գտնեմ և կ'ապացուցամեմ

$$\text{որ} \quad \text{ա} = 3, \text{բ} = 3, \text{գ} = -\frac{3}{5}$$

$$\text{և կամ} \quad \text{ա} = \frac{3}{2}, \text{բ} = 3, \text{գ} = -\frac{5}{6}, \text{և այլմ:}$$

Նոյնպէս կարող եմ լուծել և ապացուցանել, եթէ փոխանակ երեք ամծամօթից մի և նոյն հաւասարութեամ մէջ հազարաւոր ամծամօթներ պարունակուէին. Ի՞նչպէս կրնաս ուրեմմ վերոյիշեալ կամ ուրիշ որ և իցէ բազմամծամօթ մէկ հատ հաւասարութիւն մը լուծելով՝ գտնել նորա ամծամօթից թուական զօրութիւնները՝ գրահարրական գործողութեամբ:

ԹՈՒՍՈՒՐ



## ՊԱՏԱՍԽԱՆՔ

### ԲԱԶՄԱՎԻՊԻ ՍՈՒՐՀԱՆԴԱՆԻՆ

#### ՄԱՍԻ ԲԱՇԽՈՒՄՆ ՀԱՅ ԵԿԵԼԵՑԻՈՅ ՄԷՋ

Սոքահանդակը յուլիսի թուով Ե. Ա. ստորազօրութեամբ մի քանի հարցումներ կ'ուղղէր առ հետաքննիս, Հայ եկեղեցեաց մէջ Ս. Պատարագի վերջաւորութեամ ժամանակ ժողովրդի բաժնուած Մասի մկատմամբ.

ա. Թէ ԲՃԷ նշանակութիւնն ունի այդ Մասը.

բ. Որ ժամանակէ մուտ գտած է Հայ եկեղեցաց մէջ Մասի բաշխումը.

գ. Մի՞թէ ուրիշ քրիստոնեանց եկեղեցիք ունենին այս սովորութիւնը.

դ. Եթէ Հայկական եկեղեցաց արարողութեան կը վերաբերի, ինչո՞ւ չի գործադրուիր Հայ կաթողիկէ եկեղեցեաց մէջ: